



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

543

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն

Յ Ե Վ

Մ Ի Զ Ն Ա Կ Ա Ր Գ

Դ Պ Ր Ո Ց Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Հ Ա Մ Կ (Բ) Կ Կ Ե Ն Տ Կ Ա Մ Ի Վ Ո Ր Ա Ծ Ո Ւ Մ Ը

23 AUG 2017


Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն

ՅԵԿ

Մ Ի Զ Ն Ա Կ Ա Ր Գ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՆՈՐՈՐԻՄԸ



ՊԵՏԶՐՈՍ

1981

ՅԵՐԵՂԱՆ

113

**ՏԱՐՐԱԿԱՆ ՑԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԳՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀԱՄԿ(Բ) ԿՆՆՏԿԱՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ընթանալով կոմունիստական կուսակ-
ցության ծրագրի իրականացման ուղիով,
վերի համաձայն «դպրոցը պետք է լինի վոչ
միայն կոմունիզմի սկզբունքների տարածո-
ղը ընդհանրապես, այլև նրա դադափարի,
պրոլետարիատի կազմակերպչական ու դա-
տիարակչական ազդեցության տարածողն աշ-
խատավոր մասսաների կիսապրոլետարական
և վոչ պրոլետարական խավերի վրա՝ վերջ-
նականապես կոմունիզմը հաստատելու ըն-
դունակ սերունդ դաստիարակելու նպատա-
կով» (Համ. Կ. (Բ) Կ-ի ծրագիրը)։ պրոլե-
տարական պետությունը հսկայական հաջո-
ղություններ է ձեռք բերել դպրոցական
ցանցի ընդարձակման և դպրոցների վերա-
կառուցման բնագավառում։ Տարրական և
միջնակարգ դպրոցներում սովորողների թի-



1-271894

ԳԵՅԶԲԱՑԻ ՏԳԱՐԱՆ

Գրավիտ 0741(Բ), Հր. 11836 Գրու. 3015, Տիրում 3000

վր 1914 թվականի 7.800 հազար հոգուց 1981 թվականին հասավ 20 միլիոն հոգու: Արմատայես փոխվել է դպրոցների սոցիալական կազմը: Բանվորների և դուռնի աշխատավոր լայն մասսաների յերեխաները, վորոնք առաջ հնարավորութուն չունեին սովորելու դպրոցում, այժմ հանդիսանում են դպրոցի հիմնական աշակերտութունը: Մայրենի լեզվով կատարված ուսումն ընդգրկել է խորհրդային Միության կուլտուրայես ամենահետամնաց ժողովուրդներին և կատարվում է 70 լեզվով:

Սկզբունքորեն միանգամայն տարբեր է դարձել դպրոցի ամբողջ աշխատանքի բովանդակութունը:

Խորհրդային դպրոցը, վորի նպատակն է «կոմունիստական հասարակության համար պատրաստել բազմակողմանի կերպով պարզացած անդամներ», յերեխաներին տալիս է անհամեմատ ավելի լայն հասարակական-քաղաքական մտահարկոն և ընդհանուր պարզացում, զան նախահեղափոխական և բարձրագույն դպրոցը:

Վերջին տարիներում բարձրացել է խորհրդային դպրոցի յերեխաների ընդհանուր կրթության մակարդակը:

Դպրոցն առանձնապես նշանակալի նվաճումներ կատարեց մասնավորապես կուլտուրայես 16-րդ համագումարի՝ ընդհանուր պարտադիր ուսման մասին հանած պատմական վորոշումից հետո:

Միայն այս վերջին տարվա ընթացքում սովորողների թիվը տարրական և միջնակարգ դպրոցներում, 13,5 միլիոնից հասավ 20 միլիոնի: Բացի այդ, ֆարգործուներում ու տեխնիկումներում ընդգրկվեցին 1.400 հազար սովորողներ:

Դպրոցական հասակի յերեխաների պարտադիր ուսման իրադրոժման վճռական քայլերի հետ մեկտեղ, նշանակալի առաջխաղացում կատարվեց դպրոցական ուսուցման և արտադրական աշխատանքի մեջ կապ ստեղծելու գործում և հասարակական աշխատանքի ասպարկում, վորի շնորհիվ դրված են արդեն դպրոցի վերակառուցման հիմքերը, պոլիտեխնիկմի բազայի վրա:

Արհեստանոցների քանակի ավելացումը, թեպետ թվով անբավարար եւ անխնայ-
կապես դեռեա թույլ սարքավորված, սա-
կայն, դպրոցները գործարաններին, խորհ-
տնտեսություններին, մեքենատրակտորային
կայաններին, կոտնտեսություններին ամ-
րացնելը հնարավորություն եւ տալիս ավելի
ու ավելի լայն ծավալել եւ արագորեն իրա-
գործել դպրոցի պոլիտեխնիկացումը:

Սակայն չնայած այդ բոլոր նվաճում-
ներին, Կենտկոմն արձանագրում եւ, վոր
խորհրդային դպրոցը դեռեա հեռու յի բա-
վարարելուց այն ահագին պահանջները, վոր
առաջադրում ե նրան սոցիալիստական շի-
նարարության այժմյան ետապը: Կենտկոմը
դպրոցի արմատական քերությունը ներկա
մոմենտում դառնում ե նրանում, վոր ուսու-
ցումը դպրոցում չի տալիս բավարար ծավալի
հանրակրթական գիտելիքներ ե անբավա-
րար կերպով ե լուծում տեխնիկումների ու
բարձրագույն դպրոցի համար միանգա-
մայն զբաղեա մարդիկ պատրաստելու խըն-
դիրը, վորոնք լավ տիրապետեյին գիտու-

թյունների հիմքերին (ֆիզիկա, քիմիա, մա-
թեմատիկա, մայրենի լեզու, աշխարհա-
գրություն ե մի շարք այլ գիտելիքներ) Դրա
հետեւանքով դպրոցի պոլիտեխնիկացումը
մի շարք դեպքերում ստանում ե ձեւական
բնույթ ե չի պատրաստում սոցիալիզմի
բազմակողմանի զարգացած շինարարներ,
վորոնք կարողանան կապակցել թեորիան
պրակտիկային ե տիրապետեն տեխնիկային:

Ամեն մի վորձ, վորի նպատակը կլինի
դպրոցի պոլիտեխնիկացումն անջատել դե-
տությունների ե մանավանդ ֆիզիկայի, քի-
միայի ու մաթեմատիկայի սիստեմատիկ
հաստատուն յուրացումից, վորպիսի առա-
կաների ամանդումը պետք ե կատարվի խըտ-
տիվ վորոշված ե ուշի ուշով մշակված կրթա-
կան պլանների ու ծրագրերի հիման վրա ե
կիրառվի համաձայն խստիվ վորոշված դա-
սացուցականների, — վորչ այլ ինչ ե, բայց յեթե
պոլիտեխնիկ դպրոցի գաղափարի ամենա-
կոպիտ աղավաղում: Հիմունիստ կարելի յի
դառնալ միայն այն ժամանակ, յերբ կհա-
րստացնես հիշողությունը այն բոլոր գիտե-

լիցենզիայով, վոր մշակել և մարդկությանը
(Լենին, 25-րդ հատոր, 388 էջ) :

Դպրոցի ամբողջ հետադառնալու անհաշիվ
հիմքում կենտրոնացնում են դենել
այն ցուցումները, վոր տվել և Լենինը
դեռևս 1920 թվին: Ընդգծելով, վոր չի
կարելի պոլիտեխնիկացման հարցերը դենել
վերացականորեն, վոր այդ հարցերը հար-
կավոր և լուծել կուսակցության առաջ կանգ-
նած կենդրևտ խնդիրների հետ սերտորեն
կապակցված կերպով, Լենինը մասնանշում
և (Լենինի դիտողությունները Ն. Կրուպո-
կայայի պոլիտեխնիկացման կրթության վե-
րաբերյալ թեզիսների մասին), վոր անհրա-
ժեշտ և.

1. Խուսափել վաղ մարնադիտացումից և
մշակել դրա վերաբերյալ հրահանգ:

2. Բոլոր պրոֆեսիոնալական դպրոցնե-
րում ընդարձակել հանրակրթական առար-
կաները:

3. Անպայման առաջադրանք դարձնել ան-
միջական անցումը դեպի պոլիտեխնիկ կըր-
թություն, համ: Ծովերի ճիշտ, տեխնիկա

կիրառումը մի շարք, հենց այժմ իսկ մաս-
նիկ քայլերի պոլիտեխնիկ կրթության ուղ-
ղությունը...

Մեզ հարկավոր են առաջադրոծներ, փա-
կանադործներ խելոյն և յեթ: Անպայման:
Բոլորը պետք և դառնան առաջադրոծներ,
փականադործներ և այլն, բայց դրան ա-
վելացնելով հանրակրթական պոլիտեխնիկ
միջինումը:

Յերկրորդ աստիճանի դպրոցների խըն-
դիրն և՛ տալ իր գործը լիովին իմացող,
վարպետ դառնալու միանգամայն ընդունակ,
պատրաստ փոխարինելու սրակտիկ կերպով
այդ գործի համար պատրաստված առաջ-
ադրոծին, հյուսնին, փականադործին և
այլն, սակայն այն պայմանով, վոր այդ
«արհեստավոր» ունենա լայն ընդհանուր
կրթություն և իմանա այսինչ ու այնինչ
դիտությունների (ճշտվ մասնանշել ինչ
դիտությունների) միջինումը, լինի եկոնո-
միստ (վորոշակի ասել, թե ինչ պետք և ի-
մանա), ունենա պոլիտեխնիկ պատրաս-

տություն և պոլիտեխնիկ կրթութեան տարեքն ու հիմունքները:

Այն է.—

Ա. Հիմնական հասկացողութեաններ (ճշտիվ վորոշել՝ ինչ հասկացողութեաններ) ելեկտրականութեան մասին:

Բ. Ելեկտրականութեան գործադրութեանը մեխանիկական արդյունաբերութեան մեջ:

Գ. Նույնը՝ քիմիականի ասպարիզում:

Դ. Նույնը՝ ՌՍՖՍՀ ելեկտրիֆիկացիայի պլանի մասին:

— Վոչ պակաս 1—3 անգամ այցելել է ելեկտրական, գործարան, խորհրդարանութիւն:

ՅԵ. Իմանա ազրոնոմիայի այսինչ հիմունքները և այլն, մշակիլ մանրամասնորեն գիտելիքների մինիմումը»:

Այս բոլորից յեղնելով, Համ. Կ(բ)Կ կենսածր վորոշում է.

ԳՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջարկել զաշնակից հանրապետութեանների լուստողկոմատներին անմիջապես կազմակերպել ծրագրերի գիտական-մարքսիստական մշակում, ապահովելով այդպիսի ծրագրերով սխտեմավորված գիտելիքների ճշտիվ վորոշված գումարը (մայրենի լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրութեան, պատմութեան) այն հաշվով, վոր 1932 թվի հունվարի մեկից դասավանդումը սկսվի վերանայված ծրագրերի հիման վրա:

Ծրագրերը վերանայելու հետ միասին, Լուստողկոմատը պետք է ձեռք առնի մի շարք միջոցներ, վորոնք կապահովեն նոր ծրագրերով դասավանդելու իսկական հնարավորութեանը (ուսուցիչների հրահանգավորում, համապատասխան ցուցումների հրատարակում և այլն):

Կիրառելով խորհրդային դպրոցում ուսման զանազան նոր մեթոդներ, վորոնք կարող են նպաստել սոցիալիստական շինարա-

բության Խախճանայ, գործունեյա մասնակիցներ, դաստիարակելու գործին, միաժամանակ անհրաժեշտ է ծափալել վրձնական սյալքար ընդդէմ Թեթևամիտ մեթոդական պրոֆէկտորութեան, ընդդէմ գործնականում նախորոք չստուգված մեթոդների մատսայական դարձադրման, մի հանդամանք, վոր առանձնապէս ցայտուն կերպով յերևան յեկավ վերջին ժամանակներս աշտպես կոչված «պրոյեկտների մեթոդի» կիրառման միջոցին: «Դպրոցի մահացման» հակադէմոնստիկ թեորիայից բխող փորձերը՝ ամբողջ դպրոցական աշխատանքի հիմք դարձնել աշտպես կոչված պրոյեկտների մեթոդը՝ փաստորեն տանում է դեպի դպրոցի կործանում:

Կենտկոմը պարտավորեցնում է դաշնակից հանրապետութեանների լուստոդկոմատներին, անմիջապէս կադմակերպել և պատշաճ քաղաքական վրա դնել գիտա-հետադրական աշխատանքը, այդ աշխատանքի համար գործի կանչել լավագոյն կուսակցական ուսուցիչներն և վերակառուցել այդ աշխատանքը

Դպրոցի մարքսիստական-լենինյան Գիտնքներով:

Նկատի ունենալով այն հանդամանքը, վոր կոմունիստական դաստիարակութեան բաղկացուցիչ մասն է կադմում սովորողների կրթութեանը, վորը պէտք է տա սովորողներին «գիտութեանների հիմքերը», ծառայողների նրանց «թեորիայում և պրակտիկայում արտադրութեան բոլոր գլխավոր ճյուղերին, «կիրառի» ուսման սերտ կապն արտադրական աշխատանքի հետ», — առաջարկել դաշնակից հանրապետութեանների լուստոդկոմատներին 1931 թվի ընթացքում լայնորեն ծավալել դպրոցներին կից արհեստանոցների և աշխատանքային սենյակների ցանցը, կապակցելով այդ գործը սոյաժանագրերի հիման վրա դպրոցները ձեռնարկութեաններին, խորհանդեսութեաններին և կոլտնտեսութեաններին ամբողջութեամբ գործի հետ:

Ուսուցման միացումն արտադրական աշխատանքի հետ անհրաժեշտ է տառադրել այնպիսի հիմունքներով, վարպետի սովորող-

ներքի ամբողջ հանրային արտադրական աշխատանքը յեկեթարկված լինի դպրոցի կըթական ու դաստիարակչական նպատակներին :

Ձեռնարկներին, խորհանոտաություններին, ՄՏ կայաններին և կոլտնտեսություններին առաջարկվում է ցույց տալ լուսժողովոմատներին ամեն ողնություն՝ լուծելու այս խնդիրը, գատելով դպրոցական արհեստանոցների ու լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորում ու գործիքներ, զատելով վորակյալ բանվորներ ու մասնագետներ, վորոնք անմիջապես պետք է մասնակցեն դպրոցի աշխատանքին, ողնելով մանկավարժներին արտադրության ուսումնառարության գործում և այլն :

Դաշնակից հանրապետությունների լուսժողովոմատներին առաջարկվում է յուրաքանչյուր շրջանում և բոլոր քաղաքներում ստեղծել որինակելի դպրոցների ցանց, դնելով այդ դպրոցներն ավելի բարենպաստ նյութական պայմանների մեջ և կենտրոնացնելով այդտեղ լավագույն մանկավարժա-

կան ուժերը, այն հաշվով, վոր ուսուցչական մասսաները, բանվորները, կոլտնտեսականները և սովորողները կարողանան գործնականում սովորել այդ դպրոցներում պոլիտեխնիկ դպրոցի շինարարությունը :

Դպրոցի պոլիտեխնիկացմանը նպաստելու նպատակով դաշնակից հանրապետությունների լուսժողովոմատներին առաջարկվում է 1931—32 ուսումնական տարում ստեղծել փոքրիկ պոլիտեխնիկ թանգարանների ցանց, ինչպես նաև հատուկ պոլիտեխնիկ բաժիններ՝ գոյություն ունեցող զավառադիտական թանգարաններին կից : ԺՏԳՍ-ին առաջարկվում է ցույց տալ Ֆինանսական և կադմակերպչական աջակցություն այս ձեռնարկումը կիրառելու համար : Լուսժողովոմատները, պետական հրատարակչությունների հետ միասնաբար, պետք է ստեղծեն տիպարային պոլիտեխնիկ դրագարաններ աշակերտների և մանկավարժների համար, նըրանց մայրենի լեզվով : Լուսժողովոմատներին առաջարկվում է կինո-կադմակերպությունների հետ միասնաբար մշակել ձեռ-

նորակներ՝ ոչ առաջործելով էլինան գործա-
ցի, մանավանդ նրա պոլիտեխնիկացման հա-
մար։

Սոցիալիզմի շրջանում, յերբ պրոլետա-
րիատն իրադրոծում է դասակարգերի վերջ-
նական վոչնչացումը, սոված դասակարգա-
յին պայքարի պայմաններում բացառիկ կա-
րեվոր նշանակություն է ստանում կուռ կո-
մունիստական դաստիարակությունը խոր-
հրդային դպրոցում, պայքարի ու ժեղացումն
ընդդեմ ամեն տեսակ փորձերի, վրոնք
նպատակ կունենան սրտովաստել խորհրդա-
յին դպրոցի յերեխաներին հակապրոլետա-
րական խեղուղիայի տարրեր։

Այս կապակցությամբ կենտկոմն առաջար-
կում է կուսակցական կազմակերպություն-
ներին ամբաջենել դպրոցի ղեկավարությունը
և անմիջապես հսկողություն տակ տանել հա-
սարակական-քանդակական դիսցիպլինաների
դասավանդման դրվածքը 7-ամյակներում,
մանկավարժական տեխնիկումներում և ման-
կավարժական ՌՈՒՀ-երում։

Կրկնելով կենտկոմի ընդհանուր պարտա-

1-271894

դիր նախնական կրթության վերաբերյալ
1930 թվի հուլիսի 25-ի վորոչումը սահման-
ված ժամկետին իրադրոծելու անհրաժեշ-
տությունը, կենտրոնական կոմիտեն, նպա-
տակ ունենալով կուսակցության այն ծրա-
գրի պահանջների արագացույցն կենսադրո-
ծումը, վոր վերաբերում է բոլոր յերեխա-
ների և մինչև 17 տարեկան անչափահաս-
ների ընդհանուր պոլիտեխնիկ կրթության,
առաջարկում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝
մշակել ընդհանուր պարտադիր 7-ամյա կր-
թության ծրագիր։

ԴՊՐՈՑԻ ՍԵՔՐԵՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մատնանշելով այն փաստը, վոր դպրոց-
ների մեթոդական ղեկավարություն կազմա-
կերպելու համար ժողովրդական կրթության
մարմիններում յեղած խոչընդոտ անբավա-
րար են, կենտկոմն առաջարկում է կուսա-
պրոպին, — լուսժողովրդական դպրոցային
կոմկուսների կենտկոմներին և քաղաքային
ների հետ միասին անհրաժեշտ ամա-



նախաժողովուրդ մշակել ձեռնարկումներ՝ ժողովրդական կրթության մարմիններում մեթոդական աշխատանք կատարող մարքսիստական-լենինյան կադրեր պատրաստելու համար և ամրապնդել մեթոդական ղեկավարության ղեկավար ողակները լավագույն կուսակցության թեորեթիկական ու մանկավարժական ուժերով:

Պարտավորեցնել զաջնակից հանրապետությունների լուստոգիկոմատներին, վարպետի սկսած չրջանային ողակներին, ժողովրդական կրթության մարմինների սիստեմներին մեջ մտցնեն հրահանգիչներին նստիտուտ, այն նկատառումով, վոր այլ հրահանգիչները մշտապես պրակտիկ ողնություն ցույց տան ուսուցչին, նրա ամենորյա դպրոցական աշխատանքներում: Ինտարուկտորների կազմի մեջ ընդունել ժորձված, դպրոցում նրա խնդիրները լավ իմացող ուսուցիչների, տալով յուրաքանչյուր չրջանին առնվազն յերկու հրահանգիչ:

Պարտավորեցնել ժողովրդական կրթության ուսարիցում ղեկավար աշխատանք

կատարող թուր համունիստներին՝ ամենակարճ ժամանակամիջոցում տիրապետել դպրոցական աշխատանքի մեթոդական կողմին:

Կոմունիստական Ակադեմիային կից մարքսիստ մարկավարժների ընկերության առջև խնդիր դնել՝ մշակելու լուստոգիկոմի տաղադրանքների համաձայն՝ ուսուցչին իր ամենորյա աշխատանքում ցույց տրվելիք մեթոդական ողնություն հիմնական հարցերը:

Վերանայել մտնկավարժության հարցերին նվիրված գոյություն ունեցող պարբերական հրատարակությունները, նպատակ ունենալով նրանց վորակի վճռական բարելավումը և չրջադարձը՝ յերեսը դեպի դըպրոց, դեպի նրա պահանջները, պարտավորաբար իմբադրական ապարատի մեջ մտցնելով ուսուցիչներին:

Կ Ա Դ Ր Ե Ր

Ուսուցիչներին շրջանում կատարելիք աշխատանքների ընթացքում ղեկավարվել այն ցուցումով, վոր տվել է Լենինը ղեռնված 1922 թվին՝ «Ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է կանգնած լինի այնպիսի բարձրության վրա, վորպիսի բարձրության վրա նա յերբեք չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ» (Լենին, հատոր 18, մաս 2-րդ, էջ 15)։ Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր ընդհանուր պարտադիր կրթության իրականացման կապակցությամբ աճել է մանկավարժական կադրերի և նրանց վորակի բարձրացման պահանջը, առաջարկել ԽՍՀՄ Պետպլանին և դաշնակից համաբնակչության ընդհանուր պահանջարկի լուսժողովատններին յերկու ամսվա ժամանակամիջոցում կազմել ստորին և միջնակարգ դպրոցներին անհրաժեշտ ուսուցիչների պահանջը լիավոր ապահովող մանկավարժական կադրերի պատրաստման պլանը և մերկայացնել ԽՍՀՄ-ի Ժողկոմիտեին և Կառավարությանը։ Կադ-

մակերպել Խոսուցիչների ծանոթացումը հիմնական արտադրություններին՝ գործարաններում, խորհանսեսություններում ՄՏ կայաններում և կոլտնտեսներում այն հաշվով, վոր 1931—32 թվի ընթացքում այդ ծանոթացումն ընդգրկի մանկավարժական բոլոր կադրերը։

ԽՍՀՄ ՀողԺողկոմատին առաջարկվում և ազդոնոմների պատրաստման դպրոցներին կոնտինգենտը սահմանելիս՝ հաշվի առնել կոլտնտեսական յերիտասարդության դրությունների պահանջը, ինչպես նաև ոգնություն ցույց տալ Ժողովրդական կրթության մարմիններին՝ արտադրության մեջ զբաղված ազդոնոմիական ուժերը կոլյերիտ դրություններում ուղիատանքի կանչելու գործում։

Բոլոր ինդուստրիալ գյուղատնտեսական ԲՈՒՀ-երում մտցնել դպրոցի պոլիտեխնիկացման աշխատանքի մեթոդների և արտադրական տեխնիկական կրթության գրվածքի ծանոթացում։

Առաջարկել Համ. ԼԿՑՑՄ կենտկոմին և դաշնակից համաբնակչությանը լուս-

Ժողովմատներին՝ մշակել հատուկ ձեռնարկումներ, պիոներ դեկավարների ընտրության, նրանց իրենց աշխատանքին ամրացնելու, նրանց ընդհանուր և հատուկ մանկավարժական վորակի բարձրացման վերաբերյալ, սրանց համարելով մանկավարժական նոր կադրեր պատրաստելու արժեքավոր ռեզերվ:

Հանձնարարել Պետպլանին, Գինժողովմատին, Լուսաշխի Կենտկոմին և դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատներին՝ 10 որվա ժամանակամիջոցում մշակել ձեռնարկումներ տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցչության աշխատավարձի բարձրացման վերաբերյալ:

Լուսաշխի Միության Կենտկոմին առաջարկվում է, դաշնակից հանրապետությունների լուսժողովմատների հետ միասին, մի ամսվա ժամանակամիջոցում մշակել ուսուցիչների աշխատանքի դիֆերենցիալ վարձատրություն՝ ըստ չրջանների, կվալիֆիկացիայի և աշխատանքի վորակի: Ուսուցիչներին անհրաժեշտ և արդյունաբերական,

ապրանք մատակարարելը պետք է կատարել քաղաքներում և արդյունաբերական շրջաններում նրանց բանվորական փակ-բաշխիչներին և ճաշարաններին կցելու միջոցով, ընդ վորում սրանք պետք է բավարարվեն արդյունաբերական բանվորների նորմաներով: Կոլտնտեսություններում ուսուցիչներին պարենավորման միջերջներ մատակարարել կոլտնտեսությունների պարենավորման ֆոնդերից, տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով: Գյուղական ուսուցիչներին արդյունաբերական ապրանքներ և արդյունաբերական արտադրության միջերջներ, ինչպես նաև դեռևս կոլտնտեսություն չունեցող դյուղերում ուսուցիչներին պարենավորման միջերջներ մատակարարել կենտրոնացված մատակարարման ֆոնդերից, տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով:

Ուսուցչության շրջանում կատարվող բոլոր աշխատանքներում լայնորեն ծավալել ուսցմրցությունն ու հարվածայնությունը, ամեն կերպ խրախուսելով հարվածային ուսուցիչներին:

ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵ- ՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՆԱՆ

Նշելով, վոր դպրոցների նյութական բա-
ղան՝ նոր շենքերի կառուցումը, յեղածնե-
րի վերանորոգումը, դպրոցական սարքա-
վորման և ուսումնական պիտույքների աբ-
տադրանքը, վերին աստիճանի անրավարտը
և, և հանդիսանում է դպրոցի աշխատանք-
ների լավացման խոչընդոտներից մեկը,
Կենտրոնն առաջարկում է Միութենակա-
կան Պետպլանին, մշակել դպրոցական նոր
չինարարության հնդամյա պլան: Պարտա-
դիր համարել բոլոր նոր կառուցումների
մեջ դպրոցական չինարարությունն ալար-
տել՝ մինչ ձեռնարկության աշխատանքնե-
րի սկսվելը:

Դպրոցական շենքերի ֆոնդի լայնացման
նպատակով Կենտրոնն առաջարկում է տե-
ղերի կուսակցական և խորհրդային կադմա-
կերպություններին ապահովելու մինչ այժմ
չհանձնված նախկին դպրոցական շենքերի

հանձնումն ու կուլակներից դրավժած տե-
րի ողտադարձումը դպրոցների կողմից:

Անհրաժեշտ է լայնորեն գրավել կոլտն-
տեսությունների նախաձեռնությունն և մի-
ջոցները, դպրոցի նյութական բաղայի և ու-
սուցչության ապահովման բարելավման
համար:

Առաջարկվում է Ժողովատնօրհին՝
տեսչի և ուսումնական և դպրոցական սար-
քավորում և ուսումնական պիտույքներ
պատրաստող արդյունաբերական Համա-
միութենական միավորում, 2 ամսվա ըն-
թացքում ընենել այդ միավորման արտադրա-
կան պլանը, այն հաշվով, վոր 1932 թվին,
թե տարրական և թե միջնակարգ դպրոց-
ների հիմնական դանդվածը մատակարար-
ված լինի ուսումնական սարքավորման մի-
նիմումով:

Առաջարկել դաշնակից հանրապետու-
թյունների լուսավորչականներին մեկ ամսվա
ընթացքում մշակել ուսումնական պի-
տույքների ու պիտույքների տարբե-

վորման ուսանողարտներ և համապատասխան
հայտ ներկայացնել ժողտնտգերխորհին :

Առաջարկել Միութենական ժողտնտգեր-
խորհին դպրոցներին հանձնել, ձեռնարկու-
թյունների համար վոչ ոգտագործելի և
դպրոցական արհեստանոցների աշխատանքի
սենյակներին պիտանի դադդյահաները, դոր-
ծիքներն ու գանազան մնացորդները (խո-
տանքները, կտորտանքներն ու փշտանք-
ները) :

Առաջարկել դաշնակից հանրապետու-
թյունների ժողկոմխորհներին, յերկրային և
մարդային գործկոմներին և արդկոռպերու-
ցիայի որդաններին, կարճ ժամանակամի-
ջոցում տեղերում կադմակերպել մասսայա-
կան դպրոցի ուսումնական սարքավորման
ու պիտուքների արտադրությունը, այդ
նպատակով ոգտագործելով տեղական մի-
ջոցները :

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրելով դաշնակից հանրապետու-
թյունների լուսժողկոմտաների կողմից վեր-
ջին տարիներում ձեռք բերված հաջողու-
թյուններն իրենց ամբողջ կադմակերպչա-
կան աշխատանքի վերակառուցման ասպա-
րիղում, կուսակցության Կենտկոմն ընդ-
գծում է, վոր դպրոցի աշխատանքի վորա-
կի բարելավումն անհնար է առանց դպրոցի
ղեկավարության վորակի վճռական բարձ-
րացման լուսժողկոմատի մարմինների կող-
մից և արագադույն անցման դեպի նրանց
գործառնական կոնկրետ գիֆերենցիալ ղեկա-
վարությունը, ընդ վորում պետք է հաշվի
առնվի առանձին մարդերի, չրջանների ադ-
գային առանձնահատկությունների և այլն
սնտեսական ու քաղաքական նշանակու-
թյունը և սահմանվի ժողովրդական կրթու-
թյան բոլոր ողակներում դիմադրկությունը
բացասող խիստ պատասխանատվություն
հանձնարարված աշխատանքի համար : Կենտ-

կոմը պատճանջում է ժողովրդական կրթութ-
յան բոլոր մարմիններից նոր ձևվի աշխա-
տանք ու ղեկավարութուն, վորը պետք է
համաձայնեցված լինի տյն աճած պատճանջ-
ներին, վոր առաջադրում է ղարկոցին ժողո-
վրդական տնտեսության արդիականացման
վերակառուցումը:

Կենտկոմն առաջարկում է գաշնակից հան-
րապետությունների լուսժողովմատներին
վճարաբար վերակառուցել ժողովրդական
կրթության մարմինների ղեկավարության
պրակտիկան, դարձնելով այդ ղեկավարու-
թյունն իսկապես գործառնական ու դիֆի-
լենցիալ, կենտրոնացնելով ուշադրությունը
կարեւորագույն արդյունաբերական շրջան-
ների (մետաղ, ածուխ, նավթ և այլն),
խորհանտեսությունների, ՄՏ կայանների,
համապատասխան կոնկրետացման շրջանների և
նոր շինարարությունների վրա: Անհրա-
ժեշտ է վերացնել «Համասարարական» մո-
տեցումը դեպի ուժերի և միջոցների բաշ-
խումբ, կենտրոնացնելով դրանք ամենից ա-

ռաջ սոցիալիստական շինարարության ա-
ռաջատար ճակատամասերում:

Դաշնակից հանրապետությունների լուս-
ժողովմատներին առաջարկվում է ապահո-
վել դպրոցի միանձնյա կառավարման իրա-
դրծումը: Արհմիութենական կազմակեր-
պություններին առաջարկվում է ցույց տալ
ժողովրդական կրթության մարմիններին
անհրաժեշտ ոգնություն այդ դրծում:

Դաշնակից հանրապետությունների լուս-
ժողովմատները, կազմակերպելով պրակտի-
կական ոգնություն սովորողներին, միաժամանակ
պետք է բարձրացնեն ուսուցիչների պա-
տասխանատվությունը՝ ղարոցական աշխա-
տանքի վորակի համար, ուշադրության ու-
սարկա դարձնելով ու խրախուսելով նվիր-
ված և իրենց դրծն իմացող ուսուցիչ-
ներին:

Ցեքեխանների ինքնավարության մարմին-
ների աշխատանքը ղարոցում պետք է ղենլ
տյնպիսի հիմքերի վրա, վորպետքի գլխա-
վորապես մզաի բարձրացնել ուսուցման վո-
րակը և ամրապնդել դիտակից կարգապա-
հությունը դպրոցում:

Կենտկոմը դառնում է, վոր այս վորոշմամբ առաջադրված խնդիրների կենսադործման համար, դաշնակից հանրապետութիւնների լուստողկումատները պետք է իրենց որդաններում վճռական պայքար մղեն այն տարրերի դեմ, վորոնք դիմադրում են այս վորոշման մեջ նշված ուղղութիւնմբ դպրոցի աշխատանքների մեջ չընդգրկւմ կատարելու:

Կենտկոմն ընդգծում է այն հանգամանքը, վոր զնալով ամբիւր ու ամբիւր յե աճում դպրոցի նշանակութիւնն ու դերը սոցիալիստական շինարարութիւնն ու դերը: Կենտկոմն առաջարկում է բոլոր կազմակերպութիւններին՝ մղել սխտեմատիկ անշեղ պայքար դպրոցական աշխատանքի ասպարիզում կուսակցական քաղաքականութիւնն ու սոցիալիստական աղափաղումների դեմ: Պոլիտեխնիկ դպրոցի կառուցման ճանապարհի դըլիսալոր վտանգ՝ կուսակցութիւնն քաղաքականութիւնն աջ ուղորտունիստական աղափաղումների դեմ հաջող պայքարելը, — աղափաղումներ, վորոնք շտանում են դեպի դպրոցի հրաժարումը սոցիալիստիկացումից:

դեպի հին դպրոցի պահպանման փորձերը: Դեպի խզում թեորեւիկ ուսուցման տրակտիկայի միջով. — յենթադրում է պայքարի սեփեղացում ընդդեմ «ճախ» ուղորտունիստական աղափաղումների, ընդդեմ «դպրոցի մահացման» և ուսուցչի դերի նվաստացման թեորեւների:

Կենտկոմը հրավիրում է բոլոր կուսակցական կազմակերպութիւնների աշխատութիւնն այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է վճռաբար որոշեցնել ուշադրութիւնը դեպի հասարակական դպրոցը, ուսուցչի աշխատանքի ամենորայ կանկրեւ դեկամբրութիւնն ուսուցչի դերը:

Գ Ր Ա Մ Ա Ն Ե Ր

-30-

ՀՀ Ազգային գրադարան



NL0766645

ԳԻՐԸ 5 409. (1 Է.)

" 7
—
2718



**ПОСТАНОВЛЕНИЕ ЦК ВКП (б)
ОБ ЭЛЕМ. и СРЕДНИХ ШКОЛАХ**

**Госиздат ССР Армении
Эривань—1931**